ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերը նշված իրավադրույթների լույսի ներքո՝ Դատարանն արձանագրում է, որ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից, որոնք գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն՝ բացառապես տվյալ գործի շրջանակներում դատական ծախսերի հետ կապված պահանջներ ներկայացված լինելու դեպքում:

Տվյալ պարագայում Հայցվորի կողմից վճարվել է <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով պետական տուրքի գումարը, իսկ հայցապահանջը մերժվել է, իսկ պետական տուրքից բացի այլ դատական ծախսեր առկա չեն,Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 17-րդ հոդվածի 7-րդ մասով, 109-րդ, 179-րդ, 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ, 360-362-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Պաշտպանության նախարարության՝ ՀՀ ՊՆ ԳՀԱՊՁԲ–23-9/56 ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատվիրատուի ղեկավարի 11.12.2023 թվականի թիվ 95 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Վճիռը _____թվականին մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**